ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1077-Ա «21» մարտի 2025 թ.

Ն.ՉԱՐԲԱԽԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.40, Ն.ՉԱՐԲԱԽԻ Հ.327 ԵՎ Հ.327Ա ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Արմեն Շահնազարյանի լ/ա Ռաֆայել Շահնազարյանի դիմումը՝ Ն.Չարբախի 9-րդ փողոցի հ.40 հասցեում գտնվող (տնամերձ), Ն.Չարբախի հ.327 (խաղողի այգի) և հ.327ա (վարելահող) հասցեներում գտնվող ըստ օրենքի ժառանգության իրավունքի 18.04.2011թ. հ. 3265 վկայագրով Ռաֆայել և Արմեն Շահնազարյաններին փոխանցված հողամասերի սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել հողի սեփականության իրավունքի 12.02.1996թ. հ. Ա 044379 պետական ակտը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 18.04 .2011թ. հ. 3265 վկայագիրը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 22.04.2024թ. հ.Հ-3624 արխիվային տեղեկանքը, ՀՀ կադաստրի կոմիտեի 16.09.2022թ. հ.ԱՏ-16092022-01-0913 տեղեկանքը, Ռաֆայել Շահնազարյանի համաձայնագիրը՝ Ն. Չարբախի 9-րդ փողոցի հ. 40 հասցեի հողամասի տրամադրման հարցը առանց համադրվող մասերի քննարկելու համար, ՀՀ կադաստրի կոմիտեի 12.07.2024թ. հ.ԱՏ-12072024-01-0837, 29.08 .2024թ. հ. ԱՏ-29082024-01-0203 և 15.07.2024թ. հ.ԱՏ-15072024-01-0911 տեղեկանքները:

Տեղագրական հանույթների ճշգրտումից պարզվել է, որ Ն. Չարբախի 9-րդ փողոցի հ.40 հասցեի հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 377.40քմ, ըստ փաստաթղթերի՝ 360.0քմ (համադրումները վերացնելուց հետո այն կազմում է 352.50քմ), Ն. Չարբախի հ.327 հասցեի հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 5600.0քմ, որը համապատասխանում է փաստաթղթերում ամրագրված հողամասի մակերեսի հետ, Ն. Չարբախի հ.327ա հասցեի հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 2240.0քմ, որը համապատասխանում է փաստաթղթերում ամրագրված հողամասի մակերեսի հետ:

Քննարկվող հողամասերը գտնվում են ՀՀ կառավարության 04.06.2020թ. հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի Ն. Չարբախի 9-րդ փողոցի հ.40 հասցեի հողամասը 10-րդ գոտում, Ն. Չարբախի հ.327 հասցեի հողամասը 12-րդ գոտում, իսկ Ն. Չարբախի հ.327ա հողամասը 12-րդ գոտում:

ՀՀ կառավարության 24.12.2009թ. հ. 1517-Ն որոշման համաձայն՝ Ն. Չարբախի 9-րդ փողոցի հ.40 հասցեի հողամասի կադաստրային ծածկագիրն է՝ 01-011-0224-0014, Ն. Չարբախի հ.327 և Ն. Չարբախի հ.327ա հասցեների հողամասերի կադաստրային ծածկագիրն է՝ 01-011-0226-0003:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 02.07.2025թ. տրամադրված հ.Դ-2255-25 եզրակացությունը և 02.19.2025թ. հ.Դ-2255-25 գրությունը.

1.Սահմանել, որ Ն.Չարբախի 9-րդ փողոցի հ.40 (տնամերձ), Ն.Չարբախի հ.327 (խաղողի այգի) և հ.327ա (վարելահող) հասցեներում գտնվող համապատասխանաբար 352.50քմ, 5600.0քմ և 2240քմ մակերեսներով հողամասերի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծերով:

2.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ